# Հայաստան-Սփյուռք

## Գիտնականները մատնանշում են նոր ստեղծվելիք նախարարության հիմնական խնդիրները

ԱԳՆ սփյուռքի հետ կապերի պետական կոմիտեի նորանշանակ ղեկավար **Հրանուշ Հակոբյանի** առաջին հանդիպումը գիտնականների հետ էր: Երեկ ԳԱԱ-ում նա նշեց, որ սահմանադրական բարեփոխումներից հետո Սահմանադրության 11-րդ հոդվածում առաջին անգամ ամրագրվել է «սփյուռք» բառը, եւ սփյուռքի հետ կապերի ամրապնդումը սահմանադրական նորմ է դարձել: «Մեր հանրապետության նախագահն իր նախընտրական ծրագրում կարեւորեց երկու հանգամանք՝ հայապահպանության խնդիրը սփյուռքում եւ համայն հայության ներուժի օգտագործումը հայրենիքի հզորացման եւ զարգացման գործում: Այդ խնդիրները լուծելու համար, բնականաբար, անհրաժեշտ է կառուցվածքային փոփոխություն, ուստի ստեղծվեց կոմիտե՝ ընթացիկ խնդիրները կարգավորելու համար, իսկ օրենքով արդեն հաստատվել է կառավարության կազմը, եւ հոկտեմբերի 1-ից գործելու է սփյուռքի նախարարություն: Այս 3 ամիսների ընթացքում պետք է մեր գիտնականների, սփյուռքն իմացող մարդկանց աջակցությամբ փորձենք ստեղծել մի հայեցակարգ, ռազմավարություն, ինչպեսեւ կանոնադրություն եւ կառուցվածք: Բնականաբար՝ հայեցակարգից եւ ռազմավարությունից կբխեն այն խնդիրները, որոնցով պետք է զբաղվի նախարարությունը:

*Շարունակությունը՝ էջ 3*

# Հայաստան-Սփյուռք

Սկիզբը` էջ 1

Ակնկալում եմ լսել ձեր հարցադրումները, մոտեցումները, որովհետեւ չեմ կարծում, թե ճիշտ է որեւէ բնագավառ զարգացնել առանց գիտահետազոտական հիմնավորումների: Ցանկացած ծրագիր սկսելուց առաջ նախ պետք է լուրջ վերլուծություն կատարել, հետազոտել, հենվել առկա վիճակագրական փաստերի վրա: Կարծում եմ` այդ աշխատանքը կազմակերպելու գործում գիտնականները կլինեն մեր ամենահզոր բարեկամները»:

«Սփյուռքի նախարարության ձեւավորման գործում պետք է կարեւոր մասնակցություն ունենա ԳԱԱ-ն` իր ինստիտուտներով, մասնագետներով, հատկապես նրանք, ովքեր զբաղվում են սփյուռքի մշակույթի, կրթության, գիտության, պատմության հարցերով»,- ասաց ԳԱԱ նախագահի **Ռադիկ Մարտիրոսյանը**:

ԳԱԱ թղթակից անդամ **Նիկոլայ Հովհաննիսյանի** կարծիքով` կոմիտեն նախարարության վերածելիս չպետք է սայթաքել եւ նախարարությունը վերածել սփյուռքահայության կոմիտեի. «Նախարարությունն ստեղծելիս կբախվեք համայնքային եւ պետական մտածելակերպի տարբերությանը: Սփյուռքը սովոր է համայնքային մտածելակերպի, եթե ինչ-որ բան առաջարկում ես, դժվարությամբ են համաձայնում: Ժամանակն է, որ ողջ հայությունը որդեգրի պետական մտածելակերպը: Դրանից հետո հնարավոր կլինի ստեղծել համասփյուռքյան կառույց: Համայն աշխարհը, հատկապես` Ադրբեջանը, պետք է իմանա, որ գործ ունի ոչ թե 3 մլն, այլ 9-10 մլն հայության հետ»:




ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն **Աշոտ Մելքոնյանի** կարծիքով` մեզ մոտ պակասում է համահայկական մտածողությունը, որի պատճառներից մեկը հայոց պատմության դասագրքերի բացակայությունն է. «Սփյուռքի ամեն մի համայնք ունի իր առանձնահատկությունները, բայց հայոց պատմության ողնաշարը կազմող թեմատիկան ընդգրկելով դասագրքերում, տվյալ երկրի առանձնահատկությունները հաշվի առնելով` պետք է ստեղծել համահայկական, համասփյուռքյան դասագրքեր: Հայաստանի հոգսը պետք է լինի արեւմտահայերենի պահպանության խնդիրը, պետք է պատրաստել մասնագետներ եւ ուղարկել սփյուռք: Կարեւոր է նաեւ հայոց լեզվի համահայկական դասագրքերի պատրաստումը: Հայրենիք-սփյուռք առնչություններում պետք է արմատապես վերանայել մեր մոտեցումները սփյուռքի նկատմամբ եւ հայաստանակենտրոն քաղաքականություն վարելով` հասկանալ, որ ի վերջո` սփյուռքյան դպրոցներ, եկեղեցիներ պահելու հոգսը պետք է իր ուսերին վերցնի հայոց պետությունը»:

Ա. Մելքոնյանը կարեւորեց նաեւ նախարարության ֆինանսական հնարավորությունների հարցը, այլապես այն արդյունավետ չի գործի:

Հ. Հակոբյանը պատասխանեց, որ նախարարությունը չի զբաղվելու կոնկրետ խնդիրներով, վերջինի հիմնական նպատակը լինելու է այն, թե Հայաստանը` որպես պետություն, ինչպես է օգնելու սփյուռքին:

Արեւելագիտության ինստիտուտի տնօրեն **Ռուբեն Սաֆրաստյանը** նկատեց. «Սփյուռքահայերի մեջ կա մի հատված, որը հայերենին չի տիրապետում, բայց Հայաստանը համարում է իր նախնիների հայրենիքը եւ ուզում է հաղորդակցվել Հայաստանի հետ: Պետք է համագործակցել նրանց հետ: Կարեւոր է նաեւ գիտական ներուժի օգտագործումը: Նախարարությունը պետք է իր ներկայացուցիչները ունենա համայնքներում, որոնք կգործեն անկախ մեր դեսպանատներից»:

Ռ. Սաֆրաստյանը կարեւորեց նաեւ նախարարության կոորդինացիոն դերը:

Հ. Հակոբյանը տեղեկացրեց, որ հանրապետության նախագահի հետ քննարկվել է սփյուռքում ներկայացուցիչներ ունենալու հարցը, բայց ձեւը դեռ չի որոշվել. «Համաձայն եմ, որ պետք է հաշվի առնենք գիտնականների կարծիքը, որովհետեւ առաջիկա 2-3 ամսվա ընթացքում 4 կարեւոր սկզբունք պետք է իրականացնենք` գաղափարական, թե որն է լինելու սփյուռք-հայրենիք կապի գլխավոր մեխը, իրավական, կազմակերպչական եւ ֆինանսական»:

Գայանե ԳԱՍՊԱՐՅԱՆ